Թեստ 3

1-12-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ

1. Ընդգծված *ե*-ն արտասանվում է *յէ*

1) փութեռանդ
2) այծեղջյուր
3) անեղույթ
4) ամենաերկար

բառում:

2. Բոլոր բառերի բաց թողած տեղերում միևնույն տառը գրվող շարքն է(փակագծերում նշվածներից որևէ մեկը)՝

1) անե...ք, լացուկո..., ձվա...եղ (ծ կամ ց)
2) դա...ար, խոր...ուբորդ, ըն...անալ (դ կամ թ)
3) ար...ունք, խա...ուսիկ, խարխա...ել (բ կամ փ)
4) ա...փոփել, կշտա...բել, հա...պատրաստից (մ կամ ն)

3. Հատուկ անունների բոլոր բաղադրիչները մեծատառով գրվող շարքն է՝

1) ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, ՓՈՔՐ ՄԱՍԻՍ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
2) ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎ, ՊԱՐԶ ԼԻՃ
3) ԽՆԿՈ-ԱՊԵՐ, ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ, ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
4) ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ, ՆՈԲԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ, ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

4. Դարձվածային իմաստ ունեցող բառակապակցությունների շարք է՝

1) ականջը գցել, այգին ջրել
2) բախտը ժպտալ, արագ քայլել
3) գլուխ հանել, վերքը փաթաթել
4) կաշին փրկել, հացը կտրել

5. Բարդածանցավոր բառերի շարք է՝

1) երկաթուղային, բաղադրիչ, թոքախտավոր
2) ուղեկցուհի, բնօրրան, ամպհովանի
3) փլավքամիչ, իննսունական, ողբերգակ
4) քաղաքավարություն, ամանորյա, բնորդուհի

6. Համանունների շարք է՝

1) ծանր տոպրակ-ծանր աշխատանք
2) զուր-ապարդյուն, զուր-ավելորդ
3) մատաղ անել-մատաղ սերունդ
4) ժայռի ճեղք-դռան ճեղք

7. *Բյուրավոր ծաղիկների բույրը տարածվել էր անդնդախոր կիրճերում, ուր լեռնաշղթաներից թավալգլոր գահավիժում էին ականակիտ աղբյուրները* նախադասության մեջ կա

1) մեկ
2) երկու
3) երեք
4) չորս

ածական:

8. Որոշյալ դերանուն կա

1) Ո՞ւր են վազում ծեր ու ջահել,
Մարդկանց այս ի՞նչ է պատահել...
2) Ուր էլ լինեմ, չեմ մոռանա, ես ողբաձայն
երգերը մեր:
3) Ո՞նց է ժպտում իմ հոգին
Զարին, բարուն՝ ամենքին...
4) Ի՞նչ են տարել նրանք կյանքից, թե ի՞նչ
տանես դու քեզ հետ...

հատվածում:

9. Պարզ բայերի (առանց բայական ածանցի) շարք է՝

1) գաղթել, մոռանալ, կտրտել
2) բացատրել, մարտնչել, խաղալ
3) փախչել, աղալ, պատմել
4) սովորել, կանչել, ժանգոտել

10. *Ինչպես էր ընկել այդ ամայի վայրը՝ .....*

նախադասության քերականական և տրամաբանական շարունակության տարբերակն է՝

1) չէ՞ որ չէր հիշում, թե մինչ այդ որտեղ էր եղել:
2) որ չէր նկատել ճանապարհից շեղվելը:
3) այդ նույն ճանապարհով էլ դուրս պիտի գար:
4) այդպես էլ դժվարանում էր պատասխանել:

11. Փոխաբերություն պարունակող հատված է՝

1) Փայտահատը հին երգն է կրկնում,
   Եվ տաք սղոցն իր յուղում էր կրկին...
2) Շուրջս վառված է մի անուշ տագնապ,
   Մի նոր հուզում է սիրտս մրրկում:
3) Դե իմ անունով երդվի՛ր, անզգա՛մ,
   Որ էլ Սարոյին դու չես սիրելու...
4) Մոլորված ամպին իր քիվն է տալիս,
   Խրտնած քարայծին՝ մութն իր քարայրի:

12. Կետադրական սխալ կա

1) Վերևում՝ երկնքի կապույտներում, փրփուրի նման ճերմակ ամպեր էին սահում:
2) Եփրատի ալիքները բարձրանում էին՝ սպառնալով մարդկանց ու ծիերին:
3) Արարատյան դաշտի վրա վետվետում էին արևի շողերը՝ տաք, դուրեկան:
4) Աստղերի բույլերը բազմացան այնքան, որ թվում էր երկինքը հյուսված է միայն աստղերից:

նախադասության մեջ:

13-16-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

13. Նախադասությունները դասավորի՛ր տրամաբանական հաջորդականությամբ:
Գրի՛ր միայն նախադասությունների համարները:

1. Այդ հարվածները լսվում էին երբեմն կարճ և երբեմն երկար ընդհատումներով, և սպիտակ քարը փշրվում էր և թափվում գետնին:
2. Հովնաթանը քանդակում էր ամեն օր. լուսաբացից մինչև մայրամուտ լսվում էին նրա մուրճի հարվածները՝ խուլ և խորը, ինչպես սրտի բաբախյուններ:
3. Աշխատանոցը հետզհետե սկսեց շնչել ֆիգուրների բազմությամբ, սկզբնական օրերի ամայությունը լցվեց կենդանի շնչով, պատերի առաջ, դարակներին, ամեն կետում քարե ու կավե արձաններ շարվեցին:
4. Հովնաթանը աշխատում էր ոչ միայն սպիտակ քարի վրա, քանդակում էր նաև կավից:

Պատասխան՝ _____

14. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված բառագործածության սխալը և ուղղի՛ր:

Ամերիկայի Միացյալ Նահանգների և Ռուսաստանի պաշտոնական հանդիպումները անարդյունավետ անցան:

Պատասխան՝ սխալ է՝ _____
պետք է լինի՝ _____

15. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված քերականական սխալը և ուղղի՛ր:

Ամբողջ հարստությունը ծնողները հավասարապես կտակել են իրենց երկու որդիների վրա:

Պատասխան՝ *սխալ է* _____
պետք է լինի _____

16. Տրված բառերը տեղադրի՛ր բաց թողնված տեղերում՝ ենթարկելով համապատասխան փոփոխությունների:

Դա մի ..... , գեղեցկատես, ... կազմվածքով երիտասարդ էր, ձեռքերն ու ոտքերը ..... էին, ... կլիներ քսանհինգ-քսանվեց տարեկան:

(1. հիանալի, 2. արտաքուստ, 3. մկանուտ, 4. բարձրահասակ)

Պատասխան՝ 1.---------- *2.*----------

3.---------- *4.*----------

17-32-րդ առաջադրանքները կատարի՛ր ըստ տեքստի

Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքները:

I

1. Հեռու՜- հեռու՝ հրաշեկ անապատներից այն կողմ, մի բարեպաշտ արաբուհի էր ապրում, որը երկար ժամանակ էր՝ զավակ չուներ: 2. Ամենօրյա աղոթքներով աղերսում էր Տիրոջը, բայց, ավա՜ղ, մայրանալու վսեմ բաղձանքը մնում էր անկատար:

3. Մի գիշեր երազ տեսավ. սպիտակափրփուր ամպերից երևաց ճերմակամորուս մի ծերունի՝ գլխին շողարձակող լուսապսակ, ու բարբառեց. «Գտի՛ր Տիգրանակերտ ավանը, այնտեղ հինավուրց մի վանք կա...»:
4. Ասաց ու աներևութացավ:

5. Կինը մի լուսնկա գիշեր բոլորից գաղտնի հեռացավ տնից. ուխտել էր բոկոտն հասնել այն վանքը:

6. Բարկ արևից շիկացած ավազուտներն այրում էին, փշերն արնոտում էին բոբիկ ոտքերը:

7. Ծարավից տոչորվող շուրթերը չորացել էին, դեմքը՝ արևայրուքից ճաքճքել:

8. Տանջալլուկ կինը ուժասպառ հենվեց քարին, փակեց այտուցված կոպերը. թվաց՝ մեռնում է, բայց տեսիլքը կրկին հայտնվեց ու շշնջաց՝ դիմացի՛ր: 9. Նոր ուժ առած՝ կինն սկսեց քայլել:

10. Առավոտյան, երբ վաղորդայնի շամանդաղն սկսեց տարրալուծվել, և հեռվում տարորոշվեցին երկնասլաց լեռները, սիրտը թրթռաց կրծքի տակ. նա տեսավ վանքը:

II

1. Անցան ամիսներ: 2. Ուխտը կատարվեց: 3. Նորաթուխ մանկան հետ մկրտվելով վանքում՝ կինը քրիստոնյա օծվեց:

4. Լուրը հասավ արաբներին, որոնք, վրիժառության մոլուցքով բռնված, երդվեցին սպանել հավատափոխ արաբուհուն:

5. Կինը փրկություն աղերսեց Տիրոջից, և Աստված լսեց նրա ձայնը. սարն ի վեր մագլցող արաբների վրա հարձակվեցին օձերի վտառները՝ մահացու խայթելով բոլորին:

6. Կինը վանքի խնկաբույր պատերի մեջ՝ քարե օրորոցում, մեծացրեց իր որդուն:

7. Ասում են՝ այդ օրից սարի անունը մնաց Օրորոցասար:

17-20-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

17. I հատվածից դու՛րս գրիր *մառախուղ* բառի հոմանիշը:

Պատասխան՝ _____

18. I հատվածից դու՛րս գրիր մեկ ենթակայական դերբայ:

Պատասխան՝ _____

19. I հատվածի 1-ին նախադասությունից դու՛րս գրիր բաղադրյալ ստորոգյալը:

Պատասխան՝ _____

20. I հատվածից դու՛րս գրիր մեկ բառ, որում հնչյունափոխություն կա:

Պատասխան՝ _____

21-25-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ

21. I հատվածի 10 նախադասությունը բաղկացած է

1) 2
2) 3
3) 4
4) 5

պարզ նախադասությունից:

22. I հատվածում կապ խոսքի մաս պարունակող նախադասություն է՝

1) 5
2) 7
3) 8
4) 10

23. II հատվածում միջադաս դերբայական դարձվածով նախադասություն է՝

1) 3
2) 4
3) 5
4) 6

24. Մակբայ պարունակող նախադասություն է՝

1) I. 7
2) II. 3
3) I. 8
4) II. 6

25. Շաղկապի զեղչում կա

1) I. 2
2) I. 3
3) II. 6
4) II. 7

նախադասության մեջ:

26-29-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

26. II հատվածից գրի՛ր բացահայտիչ պարունակող նախադասության համարը:

Պատասխան՝ _____

27. II հատվածից դու՛րս գրիր գործիական հոլովով գործածված մեկ անորոշ դերբայ:

Պատասխան՝ _____

28. I հատվածից դու՛րս գրիր բացառական հոլովով դրված մեկ գոյական:

Պատասխան՝ _____

29. Գրի՛ր I հատվածի 8 նախադասության *քարին* բառի պաշտոնը:

Պատասխան՝ _____

30-32-րդ առարադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ

30. Տեքստից չբխող կամ նրա բովանդակությանը հակասող միտքն է՝

1) Հրաշեկ անապատներից այն կողմ մի բարեպաշտ արաբուհի էր ապրում, որը զավակ չուներ:
2) Ծերունու խորհրդով նա գնում է Տիգրանակերտ ավանում գտնվող հինավուրց վանքը:
3) Կնոջ բաղձանքը կատարվում է, նորաթուխ մանկան հետ վանքում մկրտվում է, քրիստոնյա օծվում:
4) Վրիժառու արաբները հավատափոխ արաբուհուց վրեժ են լուծում:

31. *Կինը մի լուսնկա գիշեր բոլորից գաղտնի հեռացավ տնից. ուխտել էր բոկոտն հասնել այն վանքը*

նախադասության անդամներից որի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:

1) **գիշեր** - գոյական, անորոշ առում
2) **մի** - անորոշ դերանուն
3) **բոկոտն** – որակական ածական
4) **հեռացավ** – վաղակատար անցյալ

32. *Բարկ արևից շիկացած ավազուտներն այրում էին, փշերն արնոտում էին բոբիկ <u>ոտքերը</u>*

նախադասության մեջ ընդգծված բառի կատարած պաշտոնն է՝

1) ներգործող խնդիր
2) հանգման անուղղակի խնդիր
3) վերաբերության խնդիր
4) ուղիղ խնդիր